



ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Մայր Աթոռին աղքատներ ճարտարապետական
հանձնաժողովի նախագահ)

**ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԹ ԴԱՐՈՒՄ ԵՎ Ի ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ**

Անցած դարի առաջին քառորդում, երբ դեռ Արևելյան Հայաստանն ազատագրված չէր պարսկական տիրապետությունից, Մայր Աթոռի շինարարական ջանքերը հասկանալի պատճառով սահմանափակված են եղել:

Պատմական աղբյուրներում հիշատակվում է ս. Էջմիածնի Մայր տաճարի կտուրի վերականգնումը Եփրեմ Զորագեղցու (1809—1830 թթ.) օրոք ու դպրատան կառուցումը 1813 թվականին: Վարժարանի այդ նոր, բազմասենյակ շենքի շինարարությունը թելադրված էր նրանով, որ Սիմեոն կաթողիկոսի օրոք կառուցված նախկին շենքը (որ գտնվում էր երկու պարիսպների միջև, Մայր տաճարի հյուսիսային կողմում) «տեղույ գիճութեան պատճառաւ խախտուած էր և լքեալ, և աշակերտք փոխադրուած էին Տրդատայ դռան վերնայարկ սենեակները»¹:

Եփրեմ կաթողիկոսի հաջորդը՝ Հովհաննես Ը Կարբեցին (1831—1842), Ղազարապատի բակում, Սիմեոն կաթողիկոսի ժամանակ կառուցված ամառային Վեհարանի (որն արդեն խարխված էր) տեղում, քիչ դեպի հարավ, շինել տվեց Սինոդի

սենյակները՝ մեծադիր պատմահանգրուվ ու սյունազարդ մուտքով: Սենյակներից մի քանիսը տրամադրվեցին տպարանին (մինչև 1837 թ.)²:

Ծինարարական որոշ աշխատանքներ տարվեցին Մայր Աթոռում, 1837 թ. մարտին, երբ պաշտոնական լուր ստացվեց այն մասին, որ ռուսաց Նիկոլայ Առաջին կայսրն Անդրկովկաս պիտի այցելի: Այս առթիվ նորոգվեցին ու բարեզարդվեցին ս. Էջմիածնի վանքն ու Մայր տաճարը:

Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի գահակալության տարիներին կատարված շինարարական գործերից հիշատակելի են նաև Քանքան կոչված աղբյուրի նորոգությունը, Ղազարապատի շենքի վրա երեք սենյակների հավելումը, գրադարանի ընդլայնումը և, վերջապես, պատերազմում զոհված ռուս զինվորների Աշտարակի հուշարձանի (որի կառուցման աշխատանքներն սկսված էին Եփրեմ կաթողիկոսի նախաձեռնությամբ) ավարտումը: Մաղաքիա արքեպ. Օրմանյանի կարծիքով այդ նորոգությունները «հիմնական և ծանրակշիռ բաներ չեն եղած»: Թերևս «...միակ յիշատակը որ Յովհաննէսէ կը մնար Սինոդի պաշտոնատունը

¹ Արել արքեպիսկոպոս Մխիթարեանց, Կաթողիկէ Մայր եկեղեցի Վաղարշապատայ ընդ չորից վանօրէից նորին, ի Վաղարշապատ, 1875, էջ 32:

² Արել արքեպ. Մխիթարեանց, հիշյալ աշխատությունը, էջ 33:

էր, այն ալ իբր 70 տարի ծառայելէն ետ-
քը այսօր քանդուած է³:

Մայր Աթոռի վերաշինական գործունե-
ությունն առավել նպատակաւաց ու օգտա-
վետ էղալ Ներսէս Ե կաթողիկոս Աշտա-
րակեցու գահակալության տարիներին (1843
—1857 թթ.):

Մտահոգված Մայր Աթոռի պայծառաց-
մամբ, Ներսէս Աշտարակեցին և հաջորդ
կաթողիկոսները նախաձեռնում են եկեղե-
ցիների նորոգման, վանքապատկան նոր
շէնքերի կառուցման ու բարեկարգման
զգալի աշխատանքների: Մայր Աթոռում ԺԹ
դ-ի երկրորդ կեսի կաթողիկոսների օրոք
կատարված աշխատանքների մասին տե-
ղեկությունները տակաւին ցաք ու ցրիվ են
ու կարիք ունեն ամբողջացվելու⁴:

Ներսէս Աշտարակեցին իր շինարարա-
կան ձեռնարկումներն սկսել էր նախքան
կաթողիկոս լինելը: Նա, երբ դեռ Էջմիած-
նում էր գտնվում ու գործում որպէս վանքի
տնտեսության գլխավոր կառավարիչ, ս.
Գայանէ վանքի մոտ մի անտառակ էր տըն-
կել տվել և նրան կից փոքր լճակ ստեղծել,
ասկայն իր Տփլիս գտնվելու տարիներին
այդ երկուսն էլ ոչնչացվել էին: 1822—1824
թվականներին. նրա ջանքերով կառուցվել
է Ներսիսյան դպրոցի նոր շէնքը Տփլիսի-
սում, որով և անմահացել է Ներսէսի անու-
նը⁵:

Կաթողիկոսական գահ բարձրանալով նա
առավել ոգևորությամբ գործի անցավ՝ ձեռ-
նարկելով տարիների ընթացքում փայտա-
յած շինարարական իր մեծ ծրագրերի իրա-
կանացմանը: Դրանցում ամենակարևորն ու
ծավալունն արհեստական նոր լճի և ան-
տառի ստեղծումն էր, որոնց միջոցով Աշ-
տարակեցին նկատի ուներ բարելավել վան-
քի շրջապատի միկրոկլիման, հաճելի ճե-
մավայր ունենալ միաբնակության համար ու
վառելափայտ հայթայթել վանքին:

Հազարապատից հարավ ընկած տարա-

ծության վրա արհեստական լճի շինարա-
րությունն սկսվեց 1846 թվականին ու ա-
վարտին հասավ 4 տարում: Սակայն պարզ-
վեց, որ բավականին մեծ չափեր ու երեք
մետր խորություն ունեցող այդ լիճը, անո-
րակ ջրամեկուսացման պատճառով, ջուր է
բաց թողնում: Բազում ծախսերն ու աշխա-
տանքներն ի դերն ելան: Կառուցվածքն իր
նպատակին չծառայեց:

Բայց այս հանգամանքը չվհատեցրեց իր
ծրագրի իրականացմանը նախաձեռնողին
Ներսէս Աշտարակեցուն: Քանզի տալով
անհաջող կառուցվածքը, նա անմիջապէս
ձեռնարկում է ավելի մեծ չափեր (70×170 մ.
ու 6 մ. խորություն) ունեցող մի նոր լճի շի-
նարարությանը, ղեկավար կարգելով ինժ.
Աղեքսանդր Նաումենկոյին, որը հաջողու-
թյամբ է պսակում գործը⁶: Արհեստական
լճի հատակը, աստիճանավոր պատերն ու
լճեզրյա շուրթերը ամբողջապէս երեսպատ-
վում են սրբատաշ տուֆաքարով: Հատա-
կում ու պատերում կիրառված մեկուսիչ մի-
ջոցառումները ապահովում են ջրի պահ-
պանումը:

Լճի շինարարությանը զուգընթաց, 1847
թվականից, կատարվեց անտառատնկում
հարավկողմյան ընդարձակ դաշտում, որի
աշխատանքները տևեցին 4 տարի: Տեղե-
կությունների համաձայն տնկվել է շուրջ 500
հազար տարբեր ծառեր (թթենի, ծիրանի,
վայրի), որոնցից 200 հազարը (այդ թվում՝
60 հազար թթենի, 40 հազար ծիրանի)
տնկվել է առաջին տարում⁷: Ծնորհիվ
խնամքի ու լավ կազմակերպված ոռոգման,
արագորեն աճեց ու փաթամացավ արհես-
տական անտառի զանգվածը:

Ծառատնկման աշխատանքները շարու-
նակվեցին նաև հաջորդ կաթողիկոսների օ-
րոք: Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կա-
թողիկոսը (1866—1882) զգալիորեն րն-
դարձակել է տալիս՝ վայրի ծառեր տնկելով
արդեն աճած անտառի արևմտյան կողմում,
ու ապա ցանկապատում արտաքին սահ-
մանները⁸: Դրա հետևանքով բավականին
աճեցին Ներսիսյան անտառի չափերը՝ հաս-
նելով առնվազն մեկ քառակուսի մոդին⁹:
Հաջորդ կաթողիկոսներն ուշադիր եղան
նաև լճի շրջապատի բարեկարգմանը:
Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու օրոք

³ Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ազգապատում,
մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3756:

⁴ Այդ կարգի աղբյուրներում՝ Հովհաննես եպս.
Ծախաթուրյանի «Ստորագրություն կաթողիկէ Էջ-
միածնի և հինգ գաւառացն Արարատայ» և Աբել
արքեպ. Մխիթարյանի հիշատակած աշխատություն-
ներում ԺԹ դարը լիովին չի ընդգրկված. իսկ Օր-
մանեան սրբազանի բերած տեղեկությունները խիստ
առանձնափակ են: Այդ իսկ պատճառով, պատմու-
թյունը հնարավորին չափ ամբողջացնելու նպատակով,
դիմում ենք պարբերական մամուլի, հատկապէս «Ա-
րարատ» ամսագրի, ինչպէս նաև արխիվային այլ
կարգի փաստաթղթերի օգնությանը:

⁵ Մաղաքիա արքեպ. Օրմանեան, հիշ. աշխ., էջ
3853:

⁶ Մաղաքիա արքեպ. Օրմանեան, հիշ. աշխ., էջ
3854:

⁷ Նույնը, էջ 3854:

⁸ Աբել արքեպ. Մխիթարեանց, հիշ. աշխ., էջ 38—
39:

⁹ Մաղաքիա արքեպ. Օրմանեան, հիշ. աշխատ.,
էջ 3854:

(1858—1865), լճեզրի սալահատակումն ավելացվեց ևս մեկ շարքով, իսկ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու ժամանակ լճի շուրջը պարագծով ստեղծվեց ծառուղի՝ կազմված երեք շարք ծառերից¹⁰:

Ներսես Աշտարակեցու օրոք իրականացված վերոհիշյալ մեծածավալ միջոցառումների հետ միասին, կառուցվեցին արտադրական բնույթի մի քանի շինություններ, ինչպիսիք էին շերամի, թղթի և շաքարի (վերջինս թերավարտ մնաց): 1847 թ. ձեռնարկվեց Մայր Աթոռի մեծակառույց գոմի կառուցմանը (տեղադրված տնտեսական կոչված պարտեզի տեղում, ս. Գայանե վանքի պարտեզի տարածության հյուսիս-արեւելյան անկյան մոտ, դրսի կողմից)¹¹: Ինքնատիպ այս կառուցվածքը, որ կիսավեր լինակում հասել է մինչև մեր օրերը, կրկնահարկ է միջին մասում (երկրորդ հարկը տեղավորված է մեջտեղի թաղակապ միջանցքի վրա) և միահարկ (գլխատան տիպի, «հագարաշեն» կոչված փայտագմբեթ ծածկով)՝ երկու թևերում:

Բարեկարգման աշխատանքները շարունակվեցին Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու գահակալության տարիներին: Արմատական վերակառուցումներ կատարվեցին մայրավանքի շրջակայքում: Այստեղ, Վաղարշապատ գյուղի և մայրավանքի միջև, գտնվում էին հնացած ու խաբլված շուկան ու խանութներ, որոնց խիստ անբարեհամբուր հարևանությունը դարձել էր միանգամայն անհանդուրժելի: Քանդելով-վերացնելով դրանք, վանքից հյուսիս-արևմուտք գտնվող և գյուղի միջև ընկած տարածության վրա կառուցվեց շուկայի (դանթարի) ընդարձակ, քառանկյուն և կամարակապ, կոփածո քարից պատրաստված շենքը՝ 4 մուտքերով և 130 կրպակներով, որոնց աղյուսաշեն արտաքին պատերը միաժամանակ ծառայում էին որպես շուկայի շենքի պարիսպներ¹²:

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու գահակալության տարիներից սկսած Մայր Աթոռ ս. Էջմիածնի շինարարական գործունեությունը դառնում է լայնահուն ու բազմաբնույթ:

Այդ կապակցությամբ ուշագրավ փաստաթուղթ է Գևորգ Դ. կաթողիկոսի 1868 թվականին գրած կոնդակը, որում շարադրված

¹⁰ Աբել արքեպ. Մխիթարեանց, հիշ. աշխ., էջ 84:

¹¹ Հյուսիսային թևն ամբողջովին քանդված-վերացված է փողոցի լայնացման պատճառով, իսկ հարավային թևը պահպանվել է առանց փայտագմբեթ ծածկի:

¹² Աբել արքեպ. Մխիթարեանց, հիշ. աշխ., էջ 84—85:

է ինչպես Վաղարշապատի տաճարների անմխիթար վիճակը, այնպես էլ իր ծրագրած վերաշինումները:

«Քանզի երկնամասն տաճարն սրբոյ Էջմիածնի... առ խախտեալ և վտանգեալ լինելոյ քարանց տանեաց, ի ներքուստ ի թափանցելոյ անձրևաց ոչ միայն նկարք և կերտումք եղծեալք խանգարեալք են ի սպառ, այլև որմունք տաճարին մեծ ի տեղեաց տեղեաց խախտեալ լինելոյ քարանց տանեաց և մերձ ի կործանումն խոնարհեալ, եթէ յամեացին այլևս ժամանակ խնամք և հոգատարութիւն մերոյս»:

Այնուհետև, անդրադառնալով ս. Հովհիսիմե ու ս. Գայանե տաճարների վիճակին, Գևորգ Դ կաթողիկոսը գրում է. «Իսկ վկայարան տաճարն սրբոց Հովհիսիմեայ և Գայանեի կարի ևս անկեալ ի շքեղութենէ շինութեոց և զպարիսպն նոցին վանացն գրեթէ խախտեալ իսպառ: Չայս ամենայն այսպէս տեսնելով չկարացաք ծուծել յարտաւուաց, և անտարբեր աչօք նկատող միայն լինել, այլ քանզի պարծանք էին ազգիս ի բազմաց պարծանաց այն և եթէ ի մխիթարութիւն մնացեալ մեզ շնորհիւ Աստուծոյ: Ուստի՝ նուիրեցաք զանձինս մեր կենդանացունցանէլ զյիշատակ նախնեաց մերոց Հայրապետաց, իշխանաց և պապազատաց, և ձեռն ի գործ արկաք ի շինութիւն նոցին, ապափնելով նախ յԱստուած, որ յաջողէ զամենայն ամենայնի և երկրորդ ի ջերմեանսնութիւն ձեր»¹³:

Թե կոնկրետ ինչ նկատի ուներ կատարել Գևորգ Դ կաթողիկոսը, տեղյակ ենք դառնում նույն կոնդակի մի այլ հատվածից. «Ուստի պարտաւորեալ ենք,—ասված է նրանում,—յայսմ ամի նախապէս նորոգել զտաճարն սրբոյ Էջմիածնի ի ներքուստ և արտաքուստ զտանին և զխախտեալ տեղիս որմոց և կից ընդ մին յետկոյս ասագ խորանին ընդ արևելս զպահարանս երկուս, կառուցանել մին վասն գարդոց եկեղեցւոյն, և միսն վասն մասանց սրբոց, առաւել կարևոր և պիտանին, որ չունէր ցարդ, և զուսումնարան մի յարմարաւոր ի հրահանգութիւն ժառանգաւորաց միաբանից, նաև զտապարանն քարեկարգել»¹⁴:

Այնուհետև, անդրադառնալով մյուս հուշարձանների ու վանքապատկան շենքերի վերաշինությանը, կոնդակում ասվում է. «Այլ և մտադիր ենք, եթէ Տէր յաջողեցնէ և շնորհեցնէ մեզ ժամանակ նեմաց իւտ աւարտելոյ այսոյ նախանշանակեալ շինութեոցս, նորոգել նաև զեկեղեցիս և զպարիս-

¹³ Հալկ. ՍՍՀ Պետական արխիվ, Դիվան հույ կաթողիկոսների, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 53:

¹⁴ Նույնը:

պրս սրբոց վանօրէից Հոփսիսմեանց և Գայիանեանց և գտնեալս միաբանից մերոց եպիսկոպոսաց և վարդապետաց. որոց շինուածքն և խախտեալ որմունք տաճարացն պարսպաց լարտասուս և ի ցաւ գրաւեն գամենեսին, որ ի նախանձ հայրենի փառաց լցեալ նկատեն աչօք»¹⁵:

Ահա այսպիսի պարագաներում է, որ Գևորգ Դ կաթողիկոսը ձեռնարկում է իր բեղմնավոր շինարարական գործունեությանը՝ ունենալով չափազանց լայն ծրագրեր,

որոնց զգալի մասը նրան հաջողվում է իրագործել:

Տվյալների առատությունը թելադրում է ոչ թե թափարարել ԺԺ դարի երկրորդ կեսի վերաշինական աշխատանքների ընդհանուր ակնարկն անելով, այլ շարադրել ըստ առանձին հարցերի: Ընդունելով այդ սկզբունքը, նախ և առաջ հարկ ենք համարում կանգ առնել ս. Էջմիածնի Մայր տաճարի վերաշինության և պահպանման համար գործադրած ջանքերի վրա:

(Ծարունակելի)

¹⁵ Նույնը: